

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Անիրաւ Տնտեսին Կիրակի | 2024, Մարտ 3



Սերաստիոյ Քառասուն Մանկունք,
փղոսկրեայ խորաքանդակ, 10րդ դար՝ Զ.Ե.,
Բիզանդական Արուեստի Թանգարան - Պոդէ, Պեռլին:

Հայ Եկեղեցւոյ Ճաշոցը Քառասնորդաց Մեծ Պատիւի Չորրորդ Կիրակին Սուրբ Պատարագին Աւետարանը ընթերնուլ կը սահմանէ Ղուկասի Աւետարանէն 16-րդ գլուխը: Աւետարանիչը կը ներկայացնէ Տէր Յիսուսի ուսուցումը՝ թէ ո՞րն է ձմարիտ կերպը տնտեսելու մեր նիւթական հարստութիւնը: Տիրոջ երեք անջատ խօսքեր թէ՛ ինչպէս կարելի է մտնել իր արքայութիւնը, Աստուծոյ օրէնքին յաւիտենական նկարագիրը, եւ ամուսնութեան անլուծանելի ըլլալը՝ կը կապեն իմաստուն տնտեսին, եւ աղքատ Ղազարոսին առակները. առակներ, զորս միայն Ղուկաս կ'աւանդէ:

Այս երկու առակներուն զլխաւոր նպատակն է սորվեցնել՝ որ ամէն ոք, ի վերջոյ, հաշի պիտի տայ երկնաւոր Հօր: Ուստի լաւ է՝ որ մտնենք այս դպրոցը եւ սորվինք թէ ինչ օրէնքով պէտք է լարենք մեր խիղճը. նաեւ՝ թէ ինչպէս պարտ ենք ապրիլ, հետեւելով մեր այսպէս լարուած խղճին, որպէս Աստուծոյ արքայութեան ընտիր քաղաքացիներ այս երկրի վրայ - եւ արժանանանք ժառանգելու Աստուծոյ հաճութիւնը երկնքի մէջ:

Մարտ 9-ին, Շաբաթ Օր

Կը տօնենք Սերաստիոյ Քառասուն Մանուկներուն յիշատակը: "Մանուկ" անունը հին հայերէնի մէջ "զինուոր" կը նշանակէ, եւ այս վկաները, ինչպէս կ'իմանանք Սուրբ Բարսեղ Մեծն Կեսարացի Հայրապետին ներբողէն, զինուորներ էին հռոմէական 12-րդ, "Շանթ" անուն, Լեգէոնին: 316 թուին, Լիկինիոսի յարուցած հալածանքին, անոնք հռչակեցին իրենց քրիստոնէական հաւատքը: Կուսակալը զիրենք դատապարտեց սառած լճակի մը վրայ սաստիկ ցուրտ օր մը մերկ մնալու պատիժին: Անոնցմէ մին չդիմանալով ցուրտին, թողուց

իր զինակիցները եւ մտաւ լճին եզերքին պատրաստուած բաղնիքը, բայց մահացաւ ջերմահար: Դահիճ պահակներէն Ակղէոս անուն զինուորը գերբնական լոյս մը տեսաւ, որ կը պատէր լիճին վրայ չարչարողները, եւ ինքզինք քրիստոնէայ հռչակելով՝ մերկացաւ հազուատներէն եւ միացաւ 39 հաւատարիմ մնացած վկաներուն, եւ անոնց հետ ստացաւ մարտիրոսութեան պսակը: